

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, դրամական բազան 2000թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 57853 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն աճել է 4000 մլն. դրամով կամ 7,4%-ով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ համապատասխանաբար՝ 9998 մլն. դրամով կամ 20,9%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 2750 մլն. դրամով կամ 5,0%-ով:

2000թ. օգոստոսի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 126704¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել է 17250 մլն. դրամով կամ 15,8%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար՝ 27787 մլն. դրամով կամ 28,1%-ով, իսկ 2000թ. հունիսի վերջի նկատմամբ՝ 1288 մլն. դրամով կամ 1,0%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ արտաքին ակտիվների 8915 մլն. դրամի աճով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 7627 մլն. դրամով:

Դրամական զանգվածի աճը 2000թ. օգոստոս ամսում ուղեկցվել է բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի և ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների աճով համապատասխանաբար՝ 2,6%-ով (1112 մլն. դրամով) և 0,9%-ով (660 մլն. դրամով), իսկ ցպահանջ դեպոզիտները նվազել են 4,1%-ով (483 մլն. դրամով): Ընդ որում ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 56,6% և տարեսկզբի համեմատ աճել է 4,3 տոկոսային կետով:

Դրամական զանգվածն ըստ բաղադրատարրերի 2000թ.

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	1999թ. դեկտեմբեր	2000թ.				
		հունվար	մարտ	հունիս	հուլիս	օգոստոս
Դրամական զանգված, ընդամենը	109454	102822	111202	120371	125416	126704
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	93.9	105.8	107.4	104.2	101.0
տոկոսով ընդամենը այդ թվում՝	100	100	100	100	100	100
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	42610	34839	36639	39286	42559	43670
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	81.8	105.4	106.2	108.3	102.6
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	38.9	33.9	33.0	32.6	33.9	34.5
Ցպահանջ դեպոզիտներ	9617	11561	10606	11286	11775	11292
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	120.2	107.3	107.7	104.3	95.9
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	8.8	11.2	9.5	9.4	9.4	8.9
Ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտներ	57227	56422	63957	69799	71082	71742
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	X	98.6	105.8	108.1	101.8	100.9
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	52.3	54.9	57.5	58.0	56.7	56.6

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը 2000թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 59699 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից

1 ընդգրկված են հաշվարկված տոկոսները

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 67005 մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 1999թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել են 13981 մլն. դրամով կամ 26,4%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ համապատասխանաբար՝ 1043 մլն. դրամով կամ 1,6%-ով: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 52,9% և նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 4,5 տոկոսային կետով, իսկ 2000թ. հուլիսի վերջի համեմատ՝ 0,3 տոկոսային կետով:


Դրամական զանգվածի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	1999թ.	2000թ.				
	դեկտեմբեր	հունվար	մարտ	հունիս	հուլիս	օգոստոս
Դրամական զանգված	100	100	100	100	100	100
այդ թվում՝ ազգային արժույթով	51.6	49.5	47.7	46.4	47.4	47.1
արտարժույթով	48.4	50.5	52.3	53.6	52.6	52.9

Դրամական զանգվածի տարրերի դինամիկան 2000թ. հունվար- օգոստոսին

մլն. դրամ



Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը օգոստոսին հավասարվել է 2,1-ի:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 103114¹ մլն. դրամ և օգոստոսի 1-ի համեմատ նվազել են 301 մլն. դրամով կամ 0,3%-ով, իսկ տարեսկզբի նկատմամբ աճել են 12987 մլն. դրամով կամ 14,4%-ով:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը¹ 2000թ. օգոստոսին կազմել է 16% և նախորդ ամսվա նկատմամբ ավելացել՝ 1 տոկոսային կետով:

¹ ընդգրկված են հաշվարկված տոկոսները

¹ ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքի

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

	1999թ.	2000թ.					
	1.09	1.01	1.04	1.06	1.07	1.08	1.09
Վարկային ներդրումներ², ընդամենը	70507	74397	80518	86757	87838	87779	96552
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	38778	41272	36588	42009	42163	40691	39621
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	55.0	55.5	45.4	48.4	48.0	46.4	41.0
երկարաժամկետ	31729	33125	43930	44748	45675	47088	56931
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	45.0	44.5	54.6	51.6	52.0	53.6	59.0
որից՝ վարկեր տարադրամով	60685	60630	68623	75125	76794	76202	84419
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	31310	32941	30740	36771	37842	36671	35170
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	51.6	54.3	44.8	48.9	49.3	48.1	41.7
երկարաժամկետ	29375	27689	37883	38354	38952	39531	49249
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	48.4	45.7	55.2	51.1	50.7	51.9	58.3

2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 11832 մլն. և 13078 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 3281 մլն. դրամով կամ 38,4%-ով, իսկ ժամկետանց վարկերը համապատասխանաբար՝ 3148 մլն. դրամով կամ 31,7 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված վարկերը նվազել են 774 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերն աճել են 3278 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 11344 մլն. դրամով կամ 37,0%-ով և 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմել՝ 42029 մլն. դրամ, իսկ օգոստոսի 1-ի նկատմամբ աճել է 1542 մլն. դրամով կամ 3,8%-ով:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2000թ. օգոստոսի վերջի դրությամբ կազմել է 537839, որից ֆիզիկական անձինք՝ 468315, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 366710 և 281455: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

2000թ. հունվար-օգոստոսին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 269598,2 մլն. դրամ (օգոստոսին՝ 43062,7 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 269779,7 մլն. դրամ (օգոստոսին՝ 42692,8 մլն. դրամ): Ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 181,5 մլն. դրամով (օգոստոսին մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 369,9 մլն. դրամով): 2000թ. հունվար-օգոստոսին արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 77015,9 մլն. դրամ (օգոստոսին՝ 12266,1 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 73599,6 մլն. դրամ (օգոստոսին՝ 9819,7 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 3416,3 մլն. դրամով (օգոստոսին՝ 2446,4 մլն. դրամով):

² ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը